Կրոնական հանդուրժողականության թեմայով լավագույն լրագրողական նյութի ամենամյա մրցույթ (2015-2016)

Kingdom of the Netherlands

ԵՎՐԱՍԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) հայտարարում է կրոնական հանդուրժողականության թեմաներին առնչվող կամ անդրադարձող կատարող լրագրողական լավագույն նյութի ամենամյա մրցույթ: Մրցույթի նպատակն է խրախուսել խնդրի անաչառ և բազմակողմանի լուսաբանումը, ուշադրություն սևեռել Հայաստանի կրոնական և ազգային փոքրամասնությունների հիմնահարցերին, նպաստել հանդուրժողականության մթնոլորտի արմատավորմանը Հայաստանում:

Մրցույթը կընդգրկի 2015 թվականի օգոստոսից մինչև 2016 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում հրապարակված մեդիա նյութեր: Մրցանակը կշնորհվի մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Մրցույթի մասնակցության պայմանները.

Լրագրողական նյութը.

1. կարող է լինել ցանկացած ֆորմատով՝ տպագիր, հեռուստատեսային, մուլտիմեդիա, ֆոտոշարք և այլ:

2. պետք է հրապարակված լինի հայաստանյան ԶԼՄ-ներով **2015 թվականի օգոստոսի 1-ից 2016 թվականի սեպտեմբերի 15–ն** ընկած ժամանակահատվածում:

3. պետք է անդրադառնա կրոնական հանդուրժողականությանը վերաբերող ամենատարբեր թեմաներին:

4. պետք է մրցույթին ներկայացվի հեղինակի կողմից կամ երրորդ անձի կողմից՝ հեղինակի համաձայնությամբ:

Վերջնաժամկետը

Լրագրողական նյութերը կընդունվեն մինչև **2016 թվականի սեպտեմբերի 15–ը**:

Ծանոթություն.

- **Յուրաքանչյուր անհատ կարող է ներկայացնել 1-4 հայտ**
- **Ընտրությունը կատարելու է մասնագիտական հանձնաժողովը**
- **Ներկայացվող փաթեթը (նյութեր, DVD) չի վերադարձվում հայտատուին:**

Խնդրում ենք հայտերն ուղարկել Նանե Պասկևիչյանին հետևյալ էլ-փոստով՝ npaskevichyan@epfound.am՝ վերնագրելով ձեր էլ-նամակը «*ամենամյա լրագրողական նյութի մրցույթ*»: